



Բաժբեուկ Մեիիքովի արվեստը լուրջ հիմք հանդիսացավ նոր և նորագույն գեղանկարչության զարգացման համար:

Սույն ցուցահանդեսը սահմանափակվեց դասական գեղանկարչի միայն Վրաստանում պահպանվող աշխատանքներով: Ցուցահանդեսին ներկայացվել էին Վրաստանի ազգային թանգարանի (Շավվա Ամիրանաշվիլիի անվան արվեստի թանգարանի և Դմիտրի Շևարդնաձեի անվան ազգային պատկերասրահի), Գիորգի Լեոնիձեի անվան վրաց գրականության թանգարանի հիմնադրամներում պահվող և մասնավոր հավաքորդների կտավները:

Ալեքսանդր Բաժբեուկ Մեիկովի արվեստի երկրպագուները և գնահատողները վերստին հնարավորություն ունեցան զգալու մեծ նկարչի գեղանկարչության հմայքը, խորանալու նրա հազվագյուտ ճաշակի մեջ, որը առանձնանում էր անկրկնելի վարպետությամբ, գեղանկարչության ոճի ոչսովորական իմացությամբ և պատմական փուլերի խոր ըմբռնմամբ:

Ցուցահանդեսը, որին ներկա էին նաև Վիրահայոց թեմի հոգևոր դասը, Վրաստանում ՀՀ դեսպանության դիվանագետները, տարբեր ազգի մտավորականներ, արվեստի գործիչներ և երկրպագուներ, բացեց Վրաստանի ազգային թանգարանի գլխավոր տնօրեն Դավիթ Լորթքիփանիձեն: Կարևորելով հայ-վրացական մշակույթի զարգացումը, փոխադարձ կապն ու ներդաշնակումը, գլխավոր տնօրենը արժևորեց Ալեքսանդր Բաժբեուկ Մեիիքովի արվեստը, այն, որ նա եղել է վրաց նկարիչներ Լադո Գուդիափիլու, Ավթանդիլ Վարազի, Մուսե Թոփձեի, Իլիա և Կիրիլ Ջղանեփիչների

ժամանակակիցը և գործընկերը, ովքեր իրենց անկրկնելի գործերով վրացական արվեստը դուրս են բերել համազգային ասպարեզ:

Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն Եպիսկոպոս Միրզախանյանը իր օրհնության խոսքում կարևորեց գույների անկրկնելիությունը և տրամադրությունների վերարտադրման վարպետությունը, և երկու քրիստոնյա ազգերի մշակույթների ծուլվածությունը, ներդաշնակումը, որպես մեկ համընդհանուր արվեստ ներկայանալը, որի վկայությունը այս ցուցահանդեսն էր:



